

Ալեքսանդր՝ որ փոխեցաւ թվին՝ ՌՄԵ  
Դեկտեմբերի Ա.ին:

6.

Մալաթիայի թէրզի պաշի պարոն  
Կոնոնոսի կողակցի Մարիամ՝ խաթունին  
որ փոխեցաւ ի կեանս թվին ՌՄԿին  
ապրիլի Բին:

7.

Այս է, տապան, հանգստեան, քազարծոցի պարոն Մտին դարը Ատավրտի, կրուակցի հանգուցեալ Սիմահն, որ փոխեցաւ ի կեանս ՌՄԿԲին փետրվարի Ժ:

8.

Այս է տապան հանգստեան հանգել  
կանանեօսի որդի՝ հանգել օյանէսին՝ որ  
փոխեցաւ աստէն՝ ի կեանս թվին Հայոց  
ՌՄԿԳին եւ յուղիսի ժեխին:

9.

(Աղքակի զարին տակ անընթեռնի.  
Ձուականն է) ՌՄԿԵ Դեկտ.ի հեին:

19

Այս է՝ տապան՝ հանգստեան՝ Կանանեասի որդի հանգուցեալ Զաքարին՝ որ փոխեցաւ աստէն՝ ի կեանս թվին՝ ՌՄԿԸ մայիսի ԺԲ:

11.

Այս է տապան հանգստեան տիար-  
պէքեցի՝ Աստուածատութի՝ որդի հեզա-  
հօգի՝ պարօն՝ Օհաննին՝ որ փոխեցաւ ի  
կեանս՝ թվին ՌՄՀՅ Յունվարի Ժին:

### (Առաջանարդ :)

Այս է տապան Շօրթէնէնց ծատուրի որդի (Հայրապէտին) որ փոխեցաւ Քրիստոսի . . .

Unphu:

## ԴՐ. ԻՒԹԻՒՃԵԱՆ



Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

“ԲԱՆԲԵՐ,, Հայաստանի գիտական ինստիտուտի:

“Հայաստանի գիտական ինստիտուտին՝ էպատկանում “Բանբերը, որ լցու է տեսնում Էջմիածնում գիտական կաճառի խմբագրութեամբ։ Մեր ձեռքի տակ ունինք հանդիսի Ա. Եւ Բ. Գիրքը, մէկ հատորով, որ կրում է 1921—1922 թուականները։ Դա 329 երկսիւն էջից բաղկացած ստուար եւ մեծագիր մի հատոր է — ճիշտ “Հանդէս Ամսօրեայն դիբքով, որ տպագրուել է ամենածանր պայմանների մէջ եւ ամենամեծ զոհողութիւններով։

Ինչո՞ւմն է կայանում “Բանբեր, ի ուղղակիւնը: Թերթի խմբագրութիւնը երկու խօսքով բնորոշում է իր նպատակը այսպէս.

“Գիտական ինստիտուտի “Բանքեր”-ը  
իր առաջնակարգ նպատակն է համարում  
միջոց ընծեռել զիտական ուսումնափրու-  
թեան ենթարկելու Հայաստանի աշխար-  
հագրութիւնն ու ազգագրութիւնը, տնտե-  
սական կացութիւնն ու յարաքերութիւն-  
ները, պատմութիւնն ու գրականութիւնը  
հնագիտութիւնն ու արուեստը եւ այլն”:

Այսպէս “Բանբեր”ը գալիս է լրացնելու  
մի խոշոր բաց մեր մտաւոր մշակոյթի ասպա-  
րհում: Կա միանում է, իրբեւ առաջնակարգ  
լծակ, գրական յառաջադիմական այն հոսան-  
քին, որ սկսել է “Նորբը, Երեւանում, իսկ  
“Նոր-Սևիստահը,՝ Թիֆլիսում: Կա ասպարեզ գա-  
լիս իրբեւ գիտական գործոն ժամանակ-  
մտաւոր շարժման:

Եւ իրաւի “Բանբեր”ի ամենաառաջին  
գիրքը արդարացնում է իր գծած նպատակը  
Դա գիտական մի լուրջ ժողովածու է, որի մեջ  
հանդէս են գալիս հայ ժողովրդի արուեստն ու  
գիտութիւնը, նրա քաղաքակրթութիւնն ու  
կուլտուրան, պատմութիւնն ու գրականութիւնն  
հնութիւններն ու յուշարձանները։ Այստեղ  
ընթերցողի առաջ բացւում է պատմա-հնագիտ  
տական, բանասիրական-ազգագրական, գրական  
եւ մատենագրական մի ամբողջ աշխարհ, հա  
րուստ եւ գեղեցիկ մի թանգարան։ Այդ թանգարա  
բանը կառուցուած է բարեխիղը աշխատանքով  
եւ դա հասկանալի է։ Հանդիսի դրօշի շուրջ են  
համախմբուել մեր գիտական-գրական աշխարհ

շաւագյն ոյժերը — լէօ, գարեգին եպիսկ. Յովսէինեան, դաւիթ Անանուն, Ե. Տէր-Մինասեան, Աշոտ Յովհաննիսեան, Մեսրոպ եպիսկոպոս, Խաչ. Սամուէլեան, Արսէն Տէրտէրեան, Թօրամանեան եւ ուրիշներ:

Ծանօթանակ այժմ՝ բանբերուի բովանդակութեան հետ:

“Բանբերը ունի բազմակողմանի բովանդակութիւն եւ լայն ծրագիր: Հանդիսի ամենահարուստ եւ արժէքաւոր մասը պատմա-բանասիրական բաժինն է: Այդ բաժնում Խ. Սամուէլեան “Տոտեմիլով Հայոց մէջ՝ խորագրով պատմա-ազգագրական խիստ ուշագրաւ մի շարադրութիւն է հիւսել, Դա հայ ժողովրդի հաւատալիքներից կենդանական պաշտամունքին նուիրուած մանրակրկիտ մի ուսումնասիրութիւն է: Այնտեղ ընթերցողը ծանօթանում է նախնական մարդու սոցիալ-կրօնական աշխարհայեցքի, հայ ժողովրդի պաշտամունքի առարկայ դարձած կենդանիների, թռչունների եւ նրանց հետ կապուած մնութապաշտութիւնների, հաւատալիքների եւ աւանդութիւնների հետ: Այնտեղ ցուցահանում են հայ կուլտուրական պատմութեան զանազան շրջանների բնորոշ գծերը: Յօդուածը կարդացուում է առանձին հետաքրքրութեամբ:

Նյին բաժնում ուշագրաւ է Յշոտ Յովհաննիսեանի “Գեղամայ եւ Ծարայ մելիքների տոհմը վերնագրով յօդուածը: Դա տոհմագրական մի լուրջ ուսումնասիրութիւն է: Կրաքարական մի լուրջ մի տեսութիւն է: Յօդուածի սկզբում Տէր-Մինասեան գրքի գնահատութիւնն է անում, ապա անցնում նրա բովանդակութեան եւ բնագրերի քննութեան: Վերջնիս մէջ լեզուական եւ բնագրական փաստերով ապացուցանում է, որ հայերէնը թարգմանուած է ասուրերէնից եւ մի քանի մասեր միայն յունարէնի դրոշմ են կրում: Մշխառում է նաեւ լրացնելայն պակասը, որ թողել է Մեսրոպ եպիսկոպոսի առաջարարանը գրելիս:

Տոհմագրական հետաքրքրութիւնները եւ վերին աստիճանի լուրջ մի ուսումնասիրութիւն գրել է նաեւ գարեգին եպիսկոպոսը Աղիքէկենք եւ նրանց շինարարական գործը խորագրով: Գարեգին եպիսկոպոսը մեր գիտական բանասէրների շաբբում ուշագրաւ մի տեղ է բանակագրերով գծում է յիշեալ մելիքների կեանքի իսկական պատմութիւնը:

Տոհմագրական հետաքրքրութիւնները եւ վերին աստիճանի լուրջ մի ուսումնասիրութիւն գրել է նաեւ գարեգին եպիսկոպոսը Աղիքէկենք եւ նրանց շինարարական հանդէսերի էլեբրը եւ գործ նրանց մէջ պիտի դանէր նրա պատմա-հասկիտական լուրջ ուսումնասիրութիւնները: Մեր բանասիրական գրականութիւնը եւ էջմիածնի թանգարանը շատ բան է պարտական նրան: Ահա այդ գիտաշտական նրան է պատկանում յիշական-բանասէրի գրչին է պատկանում յի-

շեալ յօդուածը: Կա պատմական յիշատական բաններից եւ արձանագրութիւններից օգտուելով՝ տալիս է մեզ Աղիքէկենք տոհմի ծագման եւ նրանց շինարարական-գեղարուեստական եւ կուլտուրական գործունէութեան պատմութիւնը: Ուսումնասիրութիւնը բաց է անում մեր առաջնաեւթեան, մանրանկարչութեան, պատկերագրութեան եւ քանդակագործութեան վերաբերեալ արժէքաւոր նորութիւններ:

Արժէքաւոր է նաեւ Մելիքսէթ-Քէկի

“Արտաւազդ եւ Մհերի հետքերը Վրաստանում՝ գիտական յօդուածը: Կրա մէջ յօդուածագիրը խօսելով Արտաւազդի եւ Մհերի անուան, այլ եւ հայկական ու վրացական բանահիւսութեան մէջ նրանց մասին եղած աւանդութիւնների ու վարիանտների մասին, ցոյց է տալիս Հայ եւ Վրացի ժողովուրդների ազգակցական կապը:

Յատուկ ուշագրութեան արժանի մի յօդուած է նաեւ Ե. Տէր-Մինասեանի “Արբահամ խոստովանողի Վկայք Արեւելիցը եւ նրա ասորական սկզբնատիպը: Դա հանգուցեալ բանասէրգիտական գալուստ Տէր-Մկրտչեանի “Արբահամ խոստովանողի Վկայք արեւելից, գրքին նուիրուած քննական մի տեսութիւն է: Յօդուածի սկզբում Տէր-Մինասեան գրքի գնահատութիւնն է անում, ապա անցնում նրա բովանդակութեան եւ բնագրերի քննութեան: Վերջնիս մէջ լեզուական եւ բնագրական փաստերով ապացուցանում է ասուրերէնից եւ ասուրերէնից եւ մի քանի մասեր միայն յունարէնի դրոշմ են կրում: Մշխառում է նաեւ լրացնելայն պակասը, որ թողել է Մեսրոպ եպիսկոպոսի առաջարարանը գրելիս:

Հետաքրքրական է նաեւ Մեսրոպ եպիսկոպոսի “Զաքարիա նկարչի ձեռագիրը եւ դաւիթ Քէկի յիշատակարանը: Դա յիշեալ ձեռագիրը նկարով Զաքարիա նկարչի, նրա մանրանկարների եւ ձեռագրի յիշատակարաններին նուիրուած աջող մի ուսումնասիրութիւն է: Յիշատակարանները արժէքաւոր են նրանով, որ պարունակում են պատմական նորութիւններ դաւիթ Քէկի մասին:

Բանասիրական բաժնում պատմաբան Լէօնիր գերումն է: Այս անդամ նա հանդէս է գալիս “Մի գիծ Հայոց մամուլի կեանքից, յօդուածով: Այնտեղ նա նկարում է արեւելտահայ մամուլի ախտաւոր մի կողմը, այն է մի շարք խմբագիրներ այս կամ այն իշխանութեան վաճառքի են հանում իրենց մամուլի ազատութիւնը: Լէօն այդ դառն փաստը ցոյց է տալիս

մեզ պատմական մի քանի վաւերագրերով, հանուած էջմիածնի դիւանից:

Համառօտ բայց ուշագրաւ մի յօդուած ունի նաեւ Ս. Տէր-Յակովեանը՝ Երիզայի յունարէն արձանագրութիւններից, խորագրով։ Արժէքաւոր է նաեւ Գ. Ասատուրի՝ Սայաթ-Նովայի ձեռագիր մատեանի ուսումնասիրութիւնը։ Այնտեղ շօշափում են երկու գլխաւոր հարցեր։ 1. Ո՞մ ձեռով է գրուած Սայաթ-Նովայի մատեանը եւ 2. Գիտէ՞ր արդէօք Սայաթ-Նովայի հայերէն գրել-կարդալ։ Ապա լոյս են տեսնում մի քանի անտիպ երգեր։ Ի՞նչքան նպատակայարձար էր տպագրել ձեռագրի պատկերը։ Աչքի են ընկնում Ս. Կանայեանի՝ Պատմութիւն Առտուածընկալ Ս. Նշանին Ս. Աղերեկու եւ Շապուհ Բագրատունի եւ Մաղլսաղան, յօդուածները։ Վերին աստիճանի մի բարեխիղ ուսումնասիրութիւն ունի Գր. Տէր-Պողոսեանը՝ Հաւարիկի բարբառը, խորագրով։

Յիշատակենք նաեւ գիտնական ճարտարապետ Թ. Թօրամանեանի՝ Կանաքարիստոնէական հայ ճարտարապետութիւն, վերնագրով խիստ շահեկան յօդուածը։ Նրա մէջ քննում է Հայաստանի նախաքրիստոնէական շրջանի, այն է քարի, բրօնզի եւ երկաթէ դարերից մնացած կիկլոպեան բերդաքաղաքների ու ամրոցների ճարտարապետական մնացորդները եւ հայ ժողովրդի նախապատմական քաղաքակրթութիւնն ու կուլտուրան։

“Բանբերոի մի կարեւոր բաժինն էլ գրական-քննադատական մասն է։ Այնտեղ իրենց մասնակցութիւնը բերել են Արաէն Տէրտէրեան, Դաւիթ Անանուն եւ Խ. Սարգսեան։

Տէրտէրեանը ուսումնասիրութեան նիւթ է դարձել Բաֆֆին — Կախտողութիւններ Բաֆֆի մասին, — աշխարհայեացքը։ Նա վերլուծում է Բաֆֆի աշխարհայեացքն ու անհատականութիւնը։ Արժէքաւոր նորութիւններ է տալիս նա Բաֆֆի անհատականութեան մասին։ Աշխարհայեացքի վերլուծութիւնը սակայն գոհացուցիչ չէ։ Յօդուածի ամբողջութեան մէջ չենք գտնում խորը վերլուծական քննադատութիւն եւ հետեւողական կարգ։ Աչքի են ընկնում նաեւ կրկնութիւնները, օր. ազդեցութիւնների մասին խօսելիս, որոնք վնասում են նիւթի համաշափութեանը։ Այս թերութիւններով հանդերձ յօդուածը կարգացւում է հետաքրքրութեամբ։

Գրական-քննադատական բաժնում Պարմիթ Անանունը վերլուծութեան է ենթարկում “Ար-

շակ Ագապեանի, գրականութիւնը։ Ագապեանը մեր տաղանդաւոր գիւղագիրն է, որ համարեամուացութեան է ենթարկուել։ Անանուն սրբում է մոռացութեան փոշին։ Նրա յօդուածը բաժանում է երեք գլխաւոր մասերի։ առաջին մասում նա տալիս է Ագապեանի կեանքի հանգամանքները, երկրորդով՝ պատկերացնում է Նրա հապարակախօսական գործունէութիւնը, իսկ երրորդ մասի մէջ կանգ է առնում Նրա գրական գործերի վրայ։ Ընդհանրապէս յօդուածը պատրաստուած է ինամքով, մի յատկութիւն, որ յատուկ է Անանունին։ Արշակ Ագապեանի կեանքի եւ գրական գործունէութեան հետ ծանօթանալու համար կարժէ կարգալ այդ յօդուածը։

Նոյն գրական բաժնում Խ. Սարգսեանը տալիս է Կեւոն Աթարէկեանի պոէզային վերլուծութիւնը։

“Բանբերոի սոցիալ-տնտեսական յօդուածներից ուշագրաւ է դաւակթ Անանունի Բարձր գասը Հայաստանում եւ Աղերբայջանում, խորագրով գրութիւնը։ Անանունը մեր կարող սոցիոլոգ-քննադատներից մէկն է։ Այդ ուղղութեամբ նա ունի մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւններ։ Դեռ անցեալ տարի է վարձնում լոյս տեսաւ Նրա ‘Շուսահայերի հասարակական զարգացումը’, խորագրով գերբը։ Այժմ էլ նա ‘Բանբերոի մէջ շօշափում է սոցիալ-հասարակական այժմէականութիւն ունեցող մի խնդիր։ Ո՞րն է այդ խնդիրը Ռուսական պրոլետարական մեծ յեղափոխութիւնը ոչնչացրեց Ռուսաստանի դասակարգացիթառանձնաշնորհումները եւ բոլոր քաղաքացիներին հոչակեց Խորհրդային հանրապետութեան քաղաքացիները։ Նոյն երեւոյթը կատարուեց նաեւ Խորհրդային Հայաստանում։ Անանունի կանգ է առնում պատմական այդ երեւոյթի վրայ։ Նա պարզում է մեզ, թէ բարձր գասը կարգը ի՞նչ էր ներկայացնում Հայաստանուն եւ Աղերբայջանում, ի՞նչ նշանակութիւն ո՞նի դասակարգերի վերացումը մեզ համար եւ ի՞նչ է կորցնում բարձր գասը նրանով։ Անանունի պատմական տուեալներով եւ գիտական վերլուծութեամբ քննում է հարցը։ Նա ուսումնասիրութեան նիւթ է դարձնում նախ աւատական Պարմակաստանը, ուր բարձր գասակարգը թէեւ իշխող, բայց սեփականատէր չէր։ Ապա անցնուու է Ցարական Ռուսաստանին եւ Նրա վարած հային քաղաքականութեան։ Այնտեղ կեանքի

թելով գծում է մի տիսուր իրողութիւն, թէ ինչպէս ցարի կառավարութիւնը ոտնահարելով ժողովրդի շահերը, թիկունք էր կանգնում բարձր դասակարգին, որը ոչ միայն կուլտուրական արժեք ցոյց չէր տալիս, այլ եւ կեղեքում, կողոպտում եւ խոչընդուռ էր հանդիսանում ժողովրդի առաջադիմութեան ու զարդացման:

Ժողովրդական տնտեսութեան պատմութեան նուիրուած հասրակական շահեկան մի յօդուած ունի նաեւ թ. Աւդալբէգեանը՝ Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանի ծածկադիրը, Խորագրով։ Դա մեղանում տնտեսապատմագիտական առաջին ուսումնասիրութիւնն է եւ այդ տեսակէտից էլ արժանի է ուշադրութեան։

Բացի յիշեալ բաժիններից՝ “Բանրելու ընի նաեւ քննադատական-գրախօսական մի բաժին։ Այստեղ աչքի է ընկում թ. Աւդալբէգեանի յօդուածը Շապուհ Բագրատունու պատմութեան մասին։ Կա պատմական տուեալներով ապացուցանում է, թէ գիրքը չի պատկանում Շապուհի գրչին։ Քննադատական բաժնում իր մասնակցութիւնը բերել է դաւիթ Անանոնը, որ քննում է Աշոտ Յաշաննիսի հայութու Օրիենտացիան, խորագրով գիրքը։ Բանասիրական-քննադատական բաժնում շահեկան է Ե. Տէր-Մինասեանի կնիք հաւատոյ եւ Հայոց եկեղեցու գիւտան։ Գիրքը Զ եւ Է գարերում գրքի մասին գրախօսական յօդուածը։ Նշնպէս ուշագրաւ է գարեգին եպիսկոպոսի Հայ Ճարտարապետական մատենախօսութիւնը։

“Բանրերի վերջում կայ Մեսրոպ եպիսկոպոսի Տեղեկութիւնը հայագիտութեան մասին։ Ա. Հ. Ե. Հայագիտութեան կորուստներից, խորագրով յօդուածները նուիրուած Գալուստ Տէր-Մկրտչեանի, Նորայր Բիւզանդացու, Կարսապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանի, Կ. Կոստանեանի եւ Լեւոն Լիսիցեանի։

“Բանրերը փակւում է Ե. Տէր-Մինասեանի Հջմիածնի գիտական ինստիտուտին տեղէկագիր-կանոնագրով։

Ընդհանրապէս “Բանրերը գիտական լուրջ հանդիսի տպաւորութիւն է թողնում իր լուրջ հանդիսի տպաւորութիւն է թողնում իր բովանդակութեամբ։ Կա կարող է մրցել մինչեւ այժմ Եյս տեսած մեր գիտական ամսագրերի այժմ Եյս տեսած մեր գիտական ամսագրերի այժմ Եյս տեսած մեր գիտական ամսագրերի այժմ Եյս տեսած մեր գրադարան յաջանց հետ։ Այս այդ տեսակէտներով մենք սրտանց ողունում ենք օրանրերի խմբագրութիւնը։

Վիեննա, 12 Մարտ 1923:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Կրօնի ԺԱԿՈՒՄԾԾ ԵՒ ԴԻՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ, ըստ համատական Կրօնագիտութեան։ Գրից Դոկտ. Հ. Ա. Մատիկեան, Վիեննա 1920, էջ ԺԲ+334։ Ազգ. Մատ. Ձկ։

“Գիտական յորդեռանդ ոգեւորութեան հանդէպ Եկեղեցւոյ ցոյց տուած տեսակ մը զգուշաւորութիւնն եւ բռնած սպասողական գիրքը, կ'ըսէ բողոքական նշանաւոր գաստիարակ մը, ըստ ինքեան մտաւոր խղճմութեան ոգւոյն շատ աւելի խնամի է, քան այն արմատական յախուոն վազքը, զոր այսօր գիտութեան ազատութեան համար կուռող յառաջամարտիկներու քով կը նշմարենք<sup>1</sup>։ Արեւելեան ազգերու քաղաքակրթական հնագարեան յիշատակարաններու լոյս աշխարհ գալէն ի վեր՝ կրօնի ծագումն եւ յարակից ինդիբներն Եւրոպան նոր գրականութիւնն ողղեցին։ Չեռք բերուած թանկագին գիւտերը բազմակողմանի ուսումնասիրութեան նիւթ գարձան, եւ իրը ճշմարիտ զինանոց մը իրարամերժ աշխարհատեսութեանց աւարեղան, եւ որ զարմանալին է գրեթէ ամէն զէնք “պահպանողական” Եկեղեցւոյ հիմերուն կ'երթար զարմուելու։ Հասկանալի պատճառներէ դրգեալ կաթողիկէներէն աւելի բողոքական բայց մանաւանդ անհաւատ գիտնականներն եին որ մասնաւոր տենդով մը հազար մաղէ կ'անցընէին հին գարերու մնացորդները։

Սակայն Բնէ Եղաւ արդինկը։ Աստուծոյ արարչութիւնն ամէն կաղապարի մէջ փորձեցին սեղմել։ ոմանք համակ նիւթի թանձրացուցին զան, արտաքսելով հոգի եւ Աստուած, ուրիշները ամբողջովին հոգիացուցին, նոյնացընելով այսպէս նիւթականն ու աննիւթականը, սահմանաւորն եւ անսահմանը։ Ուրեմն մարդկային մաքի հին ծայրայեղութեանց վազքն է, որ վերստին հակընդդէմ ուղղութեամբ տիգարձակ կը սուրայ։ Գործնականին ուղղուածն էր սակայն կրօնին մահաբեր հարուած մը տալ, մերկացընելով զան իր կենսակերտիկ արժեքէն, զետելով անոր որբանը ոչ թէ բանական հոգւոյ առ Աստուած թոփչին մէջ, այլ տարերային պատկերներու, տունկերու, հոգեկան ախտաւոր “ապրումներու” (երազ, սարսափ եւն) հերոսներու եւ նախնեաց պաշտամունքի, ոգիներու հաւատքին եւ տիեզերական Անսահմանէն եկած անորակելի Ճնշումին մէջ։

Առանց Եկեղեցւոյ անմիջական միջամտութեան իսկ մինչեւ օրս արդէն բաւական յստա-

<sup>1</sup> F. W. Foerster, Autorität und Freiheit 1910, էջ 91.